տանի Քեահեայի Նորին, մեացեալ 'ի Մինաս եպիսկոպոսէ այն ինչ հանգուցելոյ, 5500 վարձ Ոստիկանին եկելոյ. Բդեշխն պատուէր ետ առանձին չտալ Դատաւորին աւելի քան զ10,000 դահեկանս։ Եւ յետ այնորիկ արար ժողով մեծ Բդեշխն 'ի պալատի Բաղաքապետին, կոչեաց զՅովհաննէս վարդապետն եւ զայլս, եւ ետ ընթեռնուլ զհրովարտակն Արքայի 'ի լուր ամենեցուն, ապա եհարց, թէ ունի՞ք զայդչափ պարտս. նախ քան զպատասխանել Յովհաննու, յառաջեաց Դատաւորն և ասէ՝ պարտք սոցա հրաչակեալ է յամենայն տեղիս և մեծամեծք քաղաքիս իսկ վկայեն. իցէ՞ մինչեւ 36000 քսակ, և յասելն այո՛, դարձեալ ասէ Դատաւորն, զպարտս եթէ ոչ որոշեսցուք Իլամաւ ըստ հրամանի Արքային 'ի բաժինս, ոչ կարեն հատուցանել. բարւոք է ասէ՝ արարէք Իլամ, և բազմականքն դրեսցեն զիր բազմակնիք, և այրս այս ելեալ երթիցէ 'ի տեղի իւր, և ցրուեցաւ ժողովն ('ի 26 Դեկտեմբերի)։ Դարձ արարեալ Դատաւորին 'ի տեղի իւր, ձայն եհան 'ի քաղաքին 50,000 դահեկանի. Հայք ծածկարար աղդ արարին Բդեշխին, և խոստացան տալ նմա 15,000, և նա քանիցս աղդ արար նմա 'ի ձեռն հաւատարմին իւրոյ չնեղել զՀայս, զի Թագաւորն գթացեալ 'ի թշուառ վիճակ սոցա, տուեալ է հրովարտակ, պարտ է և մեզ գթութեամբ վարիլ ընդ նոսա, զի հպատակ են Արքայի. և լուեալ նորա զայս՝ դիմեաց առ Բդեշխն, և անկեալ առաջի նորա պաղատի, թէ այր մի տառապեալ և աղքատ եմ ես, տունն իմ հրկիզեալ է, և յետ քառասնամեայ աշխատութեանս հազիւ հասեալ եմ յիշխանութիւնս յայս, խնայեա՛ յիս. և նա դարձեալ յորդորէր զնա ունկն դնել բանից իւրոց, զի մի լուեալ Արքայի պատուհասեսցէ զինքն։ Եւ նորա մեկնեալ անտի արձակեաց զԴպրապետն 'ի վանս Հայոց և պահանջէր զնոյն դումար, առաջի եդեալ զտասանորդս պարտուց, և նոքա արարին պատասխանի, եթէ դիմեսցին առ նա պարտատէարք առնել դատաստան, ունի իրաւունս տասանորդի, ապա թէ ոչ, միայն զծախս Իլամի կարէ խնդրել 'ի մէնջ։

Իբրեւ ծանուցին զայս Բդեշխին, զայրացաւ յոյժ, եւ գրեաց գիր հրամանի չնեղել պարտատէարց զՀայս, և կո-